

Կ-860²-09.02.2021, 17.03.2021-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 5-րդ գլուխը լրացնել 47.28. հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 47.28. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը

1. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ երեսնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 17-րդ գլխի 230-րդ հոդվածում «47.18-47.26-րդ.» բառերից հետո լրացնել «47.28.-րդ.» բառերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 11-րդ գլուխը լրացնել 157..16. հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 157.16. Բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարարական արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության եւ վերակառուցման դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելը՝

1. բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարարական արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության եւ վերակառուցման (հանրային նշանակության շենքերի եւ շինությունների դեպքում նաեւ հիմնանորոգման) դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելը՝

2. առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրիսունապատիկից երեքհարյուրիսունապատիկի չափով:

3. տուգանքի նշանակումից հետո մեկ տարվա ընթացքում սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 17-րդ գլխի 244.11. հոդվածի 1-ին մասում «157.1-157.14-րդ» թվերից հետո լրացնել «եւ 157.16.» թիվը, 1-ին կետում՝ «հարյուրապատիկից բարձր չափով,» բառերից հետո՝ «157.16.-րդ. հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով,» բառերը, 2-րդ կետում՝ «հարյուրապատիկի չափով,» բառերից հետո՝ «157.16.-րդ. հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրիսունապատիկի չափով,» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին եւ 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:

Կ-860²-09.02.2021, 17.03.2021-ԱՍ-011/1

ՏԵՐԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 5-րդ գլուխը լրացնել 47.28. հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 47.28. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը

1. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ երեսնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 17-րդ գլխի 230-րդ հոդվածում «47.18-47.26-րդ,» բառերից հետո լրացնել «47.28.-րդ,» բառերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 11-րդ գլուխը լրացնել 157..16. հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 157.16. Բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարակական արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության եւ վերակառուցման դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելը՝

1. բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարակական արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության եւ վերակառուցման (հանրային նշանակության շենքերի եւ շինությունների դեպքում նաեւ հիմնանորոգման) դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելը՝

2. առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրիհիսունապատիկից երեքհարյուրիհիսունապատիկի չափով:

3. տուգանքի նշանակումից հետո մեկ տարվա ընթացքում սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 17-րդ գլխի ~~24411~~ 244.11. հոդվածի 1-ին մասում «157.1-157.14-րդ» թվերից հետո լրացնել «եւ 157.16.» թիվը, 1-ին կետում՝ «հարյուրապատիկից բարձր չափով,» բառերից հետո՝ «157.16.-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով,» բառերը, 2-րդ կետում՝ «հարյուրապատիկի չափով,» բառերից հետո՝ «157.16.-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի չափով,» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին եւ 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» [Կ-860-09.02.2021,17.03.2021-ԱՍ-011/1](#), «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» [Կ-860¹-09.02.2021,17.03.2021-ԱՍ-011/1](#), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» [Կ-860²-09.02.2021,17.03.2021-ԱՍ-011/1](#), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» [Կ-860³-09.02.2021,17.03.2021-ԱՍ-011/1](#), «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» [Կ-860⁴-17.03.2021-ԱՍ-011/1](#) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մաս <u>Կ-860¹-09.02.2021,17.03.2021-ԱՍ-011/1</u>	«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «ծևավորում են» բառերը անհրաժեշտ է փոխարինել «ծևավորում է» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված <u>Կ-860³-</u> <u>09.02.2021,17.03.20</u> <u>21-ԱՍ-011/1</u>	հոդվածում նշված «24411» թիվը անհրաժեշտ է փոխարինել «244.11» թվով:		
3.	ՀՀ կառավարություն	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդված <u>Կ-860-</u> <u>09.02.2021,17.03.20</u> <u>21-ԱՍ-011/1</u>	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել նոր մասով հետևյալ խմբագրությամբ. «4. Կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերն ու շինությունները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում վերակառուցվում են՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը:»	Ընդունվել է, լրացվել է:	Ընդունվել է: